

**«ՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

Ընթացիկ իրավիճակը, և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Ներկայումս ներման գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ներման մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք): Մասնավորապես, Օրենքով կարգավորվում են ներման, ներման խնդրագրերի ներկայացման և քննարկման, ինչպես նաև ներման հրամանագրերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները:

Հարկ է նշել, որ Օրենքում ամրագրված չեն մի շարք դրույթներ, որոնք վերաբերում են ներման խնդրագիրը չքննարկելու և վերադարձնելու ինստիտուտին, նախատեսված չեն այն բացառիկ հանգամանքները, երբ կարող է նոր ներման խնդրագիր ներկայացվել մերժելուց հետո ժամկետի չպահպանմամբ, ամրագրված չէ ներման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգը, ամրագրված չեն տուժողների և նրանց իրավահաջորդների իրավունքների պաշտպանության մեխանիզմներ:

Այս առումով առանձնացվել են այն հիմնական խնդիրները, որոնք իրենց կարգավորումը պետք է ստանան «Ներման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ): Նախագծի ընդունումը պայմանավորված է գործնականում առկա որոշ խնդիրների կարգավորման, օրենսդրական դրույթների կատարելագործման, ներում շնորհելու ինստիտուտն առավել թափանցիկ և հաշվետու դարձնելու, ինչպես նաև հանցագործության հետևանքով տուժած անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ:

1) Նախագծով առաջարկվում է ամրագրել ներման խնդրագիրը չքննարկելու և վերադարձնելու դեպքերը: Գործող կարգավորումների համաձայն կարող է առաջանալ այնպիսի մի իրավիճակ, երբ դատապարտյալը ներկայացրել է ներման խնդրագիր և պատժից ազատվել է Օրենքով նախատեսված այլ հիմքերով: Այս պարագայում ներման խնդրագրի ճակատագիրը մնում է չլուծված՝ առկա իրավական բացի պատճառով: Գործնականում նման խնդիրների լուծումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված օրենքով նախատեսված պատժից ազատելու տարբերի հիմքերի հետ: Օրինակ՝ ներման խնդրագրի քննարկման ժամանակ, երբ դատապարտյալը համաներում հայտարարելու հետևանքով ազատ է արձակվել պատժի կրումից, ապա վերջինիս ներման խնդրագիրը չի քննարկվում, իսկ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքերում այն ընդհանուր կարգով քննարկվում է, սակայն պայմանավորված այն հանգամանքով, որ դատապարտյալն ազատվել է պատժի կրումից այն մերժվում է: Օրենսդրությունում առկա նման բացը գործնականում լուրջ

խնդիրներ է առաջացնում, այն հակասում է հանրային ռեսուրսները խնայելու, դրանք առավել արդյունավետ ծախսելու ընթացակարգին:

Վերոշարադրյալը վկայում է այն մասին, որ անհրաժեշտություն է առաջանում Օրենքով նախատեսել ներման խնդրագիրը չքննարկելու և վերադարձնելու գործիքակազմ:

2) Օրենքով առկա են այնպիսի ժամկետային կարգավորումները, որոնք խնդրահարույց են համարվում սուղ լինելու հանգամանքով պայմանավորված: Այսպես, Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

«Սույն մասով նախատեսված մարմինները պարտավոր են նախարարության հարցումն ստանալու պահից հնգօրյա ժամկետում պահանջվող տեղեկատվությունը ներկայացնել նախարարություն:

(...)

Անձնական գործն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Վարչապետն այն ուղարկում է Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ներման խնդրագրի վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով:»:

Օրենքով նախատեսված նման կարճ ժամկետները գործնականում անհնարին է պահպանելը կախված վերը նշված պետական մարմինների աշխատանքի ծանրաբեռնվածությունից: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում սահմանել այնպիսի իրատեսական ժամկետներ, ինչը հնարավորություն կընձեռի պետական մարմիններին պահպանել Օրենքում ամրագրված ժամկետները:

3) Իրավունքի գերակայության ազդեցության ներքո ձևավորվող իրավական հասարակությունում կարևոր է համարվում հանցագործության հետևանքով տուժած անձանց և դատապարտյալների իրավունքների համաչափ հավասարակշռումը: Ներկայիս կարգավորումների պարագայում նախատեսված չեն գործուն երաշխիքներ տուժողների և նրանց իրավահաջորդների իրավունքների պաշտպանության համար և ներման գործընթացն իրականացվում է տուժողներին անիրազեկ պահելու պայմաններում՝ խախտելով վերջիններիս լաված լինելու հիմնարար իրավունքը:

«Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին» խարտիայով ամրագրվում է անձի լաված լինելու իրավունքի հիմնարար գաղափարը:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 1985 թվականին ընդունված «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» N R(85) 11 հանձնարարականի նախաբանում հատուկ ընդգծվել է, որ այն ընդունվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական արդարադատության նպատակները ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործառույթը հաճախ բարդացնում է տուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը: Մինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի տուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը:

Ելնելով վերոշարադրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ամրացնել տուժողի վստահությունը քրեական արդարադատության համակարգի նկատմամբ՝ Նախարարների կոմիտեն Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին հանձնարարել է վերանայել իրենց օրենսդրությունը և դատական պրակտիկան՝ քրեական արդարադատության համակարգում տուժողի դերը բարձրացնելու մի շարք ուղղություններով:

Քրեական արդարադատության համակարգում տուժողի պահանջմունքները բավարարելու և շահերը պաշտպանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պետությունների պարտավորությունը սահմանված է նաև ՄԱԿ-ի հռչակագրում, որի 4-րդ կետի համաձայն՝ հանցագործությունից տուժողները ներպետական օրենսդրությանը համապատասխան պետք է ունենան արդարադատության մատչելիության և իրենց պատճառված վնասի արագ փոխհատուցման իրավունք: Հռչակագրի 6-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է օժանդակել այն բանին, որ դատական և վարչական ընթացակարգերը ըստ էության համապատասխանեն հանցագործության զոհերի պահանջներին, այդ թվում՝

ա) դատական քննության ընթացքում տուժողների դերի, դատավարության իրականացման կարգի, ժամկետների և արդյունքների մասին տուժողներին տեղեկատվություն տրամադրելու միջոցով,

բ) վարույթի ցանկացած փուլում գործի էության վերաբերյալ տուժողներին կարծիք արտահայտելու հնարավորություն ապահովելու և այդ կարծիքները քննարկելու եղանակով, հատկապես երբ տվյալ հարցը վերաբերում է տուժողին (...):

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական (...) կյանքի (...) նկատմամբ հարգանքի իրավունք»: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) իրավական դիրքորոշում է ձևավորել տուժողի շահերի պաշտպանության վերաբերյալ Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի գործով, և մասնավորապես ՄԻԵԴ-ի վճռի 45-րդ կետի համաձայն՝ «..... անձնական կյանքի գաղափարը ներառում է նաև անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը: 8-րդ հոդվածի ներքո Պետությունները կրում են անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունն այլ անձանց ոտնձգություններից պաշտպանելու պարտականություն: Այդ նպատակով նրանք պետք է հաստատեն ու գործնականում կիրառեն մասնավոր անձանց ոտնձգություններից պաշտպանություն տրամադրող համարժեք իրավական կառուցակարգ»:

Այսպիսով, ՄԻԵԴ-ը սահմանել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պետության համար առաջացնում է ոչ միայն նեգատիվ պարտականություններ (ձեռնպահ մնալու համապատասխան ազատություններին միջամտելուց), այլ նաև պոզիտիվ պարտականություններ (inter alia, սահմանելու տուժողների իրավունքների քրեադատավարական պաշտպանության համարժեք կառուցակարգեր):

Վերը նշված գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ պետությունը չի կատարել իր այդ պոզիտիվ պարտականությունը, քանի որ, *inter alia*, տուժողին իրական հնարավորություն չի տրվել իրականացնելու իր դեմ ոտնձգություն թույլ տված անձի քրեական հետապնդում: Դրա հիման վրա արձանագրվել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

Այսպես, ներման գործընթացում ևս անհրաժեշտ է առանձնապես ծանր հանցագործությունների տուժողների և նրանց իրավահաջորդների իրավունքների պաշտպանության համար նախատեսել մեխանիզմ նրանց դիրքորոշումը լսելի դարձնելու համար:

Լսված լինելու իրավունքը կամ արդարացի լսումների իրավունքը («*audiatur altera pars*», «*audi alteram partem*») իրավագիտությանը հայտնի է դեռևս հնագույն ժամանակներից՝ որպես մարդու բնական իրավունք, և իր էությամբ հանգում է այն գաղափարին, որ ոչ ոք չպետք է դատապարտվի առանց ինքն իրեն պաշտպանելու հնարավորության: Լսված լինելու իրավունքը բխում է իրավունքի գերակայության սկզբունքից՝ հանդիսանալով այդ հիմնարար սկզբունքի արդյունքը, հետևանքը և պարտադիր պահանջներից մեկը¹:

Որպես կանոն առանձնապես ծանր հանցագործություններն ուղղված են մարդու կյանքի, առողջության, սեռական անձեռնմխելիության դեմ: Քննարկվող հանցագործությունների տեսակային օբյեկտները կարևորագույն այնպիսի բարիքներ են, ինչպիսիք են մարդու կյանքը և առողջությունը: Այսպես, մարդու կյանքն ի վերուստ տրված բարիք է, հիմնարար սոցիալական արժեք: Առանձնապես ծանր հանցագործությունների հանրային բարձր վտանգավորությունը պայմանավորված է հատկապես նրանով, որ դրանք հաճախ վնասում են այդ կարևորագույն հասարակական հարաբերությունները: Այս դեպքում էապես կարևոր է դառնում տվյալ հանցագործություններից տուժողների (կամ նրանց իրավահաջորդների) լսված լինելու իրավունքի իրացման իրական մեխանիզմների նախատեսումը, ինչը հնարավորություն կընձեռի կողմին ներկայացնելու իր կարծիքը ներման գործընթացի առնչությամբ:

Բացի այդ, ներման գործընթացում քննարկվող հանցագործություններից տուժած անձանց լսված լինելու իրավունքի ամրագրման հանգամանքը պայմանավորված է նաև այն փաստով, որ պետությունը պոզիտիվ պարտականություն է ստանձնել ապահովելու երկու կողմերի իրավահավասարությունը, մի կողմից ապահովելով անձի ներում խնդրելու իրավունքը, մյուս կողմից՝ սոցիալական արդարության վերականգնումը, որը տվյալ իրադրությունում կարող է արտահայտվել տուժողների կարծիքը լսելու և դատապարտյալի հանդեպ նրանց ունեցած վերաբերմունքը բացահայտելու տեսանկյունից:

Այլ կերպ՝ երկրում քրեական քաղաքականության իրականացման և պատժից ազատելու ինստիտուտների կիրառման գործընթացում չպետք է անտեսվի նաև հանցանքից տուժած անձի լսված լինելու և կարծիք արտահայտելու իրավունքը, քանի

¹Տե՛ս էլեկտրոնային աղբյուր՝ http://publications.yso.am/wp-content/uploads/2018/05/5Karen_Hakobyan.pdf

որ պետությանն է վերապահված նրանց աջակցության ու մյուս իրավունքների ապահովման խնդիրը:

Հարկ է նշել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որոշ երկրներում (ինչպիսիք են օրինակ՝ ԱՄՆ-ն, մասնավորապես՝ Հարավային Կարոլինայի և Ջիորջիայի նահանգներում, Իսպանիայի Թագավորություն) և ամրագրված է ներման գործընթացում տուժողների իրավունքների պաշտպանության ուղղված որոշակի գործիքակազմ, որը հնարավորություն է տալիս իրական դարձնել նրանց իրավունքների իրականացումը՝ սահմանելով այդ գործընթացում տուժողների լավագույն լինելու և պատշաճ ծանուցված լինելու իրավունքները²:

4) Անդրադառնալով ներման գործընթացի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունն ապահովելու հարցին՝ հարկ է նշել, որ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:»:

(.....)

Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք (...)

2. Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:»:

Միջազգային փաստաթղթերով ևս, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրը (հոդված 12-րդ), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (հոդված 8-րդ), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (հոդվածներ 17-րդ, 19-րդ), սահմանվում է անձի անձնական տվյալների պաշտպանության մասին դրույթներ:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **անձնական տվյալ**՝ ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը.

(...)

15) **հանրամատչելի անձնական տվյալներ՝ տեղեկություններ, որոնք տվյալների սուբյեկտի համաձայնությամբ** կամ իր անձնական տվյալները հանրամատչելի դարձնելուն ուղղված գիտակցված գործողությունների կատարմամբ

² Տե՛ս էլեկտրոնային աղբյուր՝ <https://pap.georgia.gov/victim-information-program-vip#>, <https://www.dppps.sc.gov/Victim-Services/Pardon-Hearing-Explanation> :

մատչելի են դառնում որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց համար, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք օրենքով նախատեսված են որպես հանրամատչելի տեղեկություններ:

(...)»:

Նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում կարող է սահմանվել անձնական տվյալների հանրամատչելի տեղեկատվության ռեժիմ (հեռախոսային տեղեկատուներ, հասցեների գրքեր, կենսագրական տեղեկատուներ, մասնավոր հայտարարություններ, եկամուտների հայտարարագրում և այլն): Հանրամատչելի են համարվում անձի անունը, ազգանունը, ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը, վայրը, մահվան վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, ինչպես նաև այն անձնական տվյալները, որոնք տվյալների սուբյեկտի կողմից հանրամատչելի դարձնելուն ուղղված գիտակցված գործողությունների կատարմամբ մատչելի են դառնում որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց համար:

Նշված հոդվածից երևում է, որ սպառիչ կերպով թվարկվում է այն անձնական տվյալների ցանկը (անձի անունը, ազգանունը, ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը, վայրը, մահվան վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը), որը, անկախ տվյալների սուբյեկտի համաձայնության առկայության և օրենքով հանրամատչելի իրավական ռեժիմ սահմանված լինելու հանգամանքից, միշտ համարվում է հանրամատչելի:

Սակայն հարկ է նշել, որ այդ ցանկում ընդգրկված անձնական տվյալները դիտարկվում են հանրամատչելի միայն առանձին վերցված (ինքնուրույն օգտագործելու դեպքում): Մինչդեռ, եթե դրանք համադրվում են այլ տեղեկությունների հետ, որի արդյունքում հաստատվում է տվյալների սուբյեկտի հետ կապված որևէ փաստ, հանգամանք, իրադարձություն կամ այլ տվյալ կամ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացվում է անձը կամ բացահայտվում է նրա այլ անձնական տվյալ կամ նրա վերաբերյալ այլ տեղեկություն, ապա տվյալ դեպքում անձի անունը և ազգանունը անհրաժեշտ է դիտարկել այլ տվյալների հետ համակցության մեջ և չի համարվի հանրամատչելի:

Վերոնշյալից ելնելով՝ հարկ է նշել, որ ներման խնդրագիր ներկայացրած դատապարտյալների անուն-ազգանունները թեև անձնական տվյալներ են, սակայն անվան և ազգանվան հետ համատեղ բացահայտվող տեղեկության համատեքստում 1) դատապարտյալի վերաբերմունքը քրեական ենթամշակույթի նկատմամբ, 2) պատիժը կրելու ընթացքում դրսևորած վարքագիծը, 3) տուժողին պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը, 4) իր կատարած հանցանքի նկատմամբ դատապարտյալի ունեցած վերաբերմունքը, 5) մասնակցությունը վերասոցիալականացման միջոցառումներին և ծրագրերին, 6) առողջական վիճակը, 7) սոցիալական դրությունը, 8) ընտանեկան դրությունը և խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը, 9) նախկինում ներում շնորհված լինելու կամ համաներում կիրառված լինելու, նախկինում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված լինելու

կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինված լինելու հանգամանքը) չեն կարող համարվել հանրամատչելի:

Ավելին՝ թեև անձի անունը, ազգանունը, ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը, վայրը, մահվան վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը համարվում են հանրամատչելի տվյալներ, սակայն դրանք դիտվում են որպես այդպիսին միայն ինքնին օգտագործվելու դեպքում, իսկ եթե հանրամատչելի տվյալի օգտագործմամբ կբացահայտվի անձնական կյանքին առնչվող այնպիսի հանգամանք, որով կխախտվի անձի անձնական կյանքի գաղտնիությունը, ապա նշված տվյալը ևս ենթակա է պաշտպանության, այսինքն՝ այդ դեպքում պաշտպանությունը վերաբերում է ոչ թե հանրամատչելի տվյալին, այլ անձնական կյանքի գաղտնիությանը:

Ինչ վերաբերում է հարցման հիման վրա խնդրո առարկա անձնական տվյալները տրամադրելու կամ տրամադրումը մերժելու հարցին, ապա պետք է նշել, որ Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձնական տվյալներ մշակելը օրինական է, եթե՝ 1) տվյալները մշակվել են օրենքի պահանջների պահպանմամբ, և տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը, բացառությամբ սույն օրենքով կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի, կամ 2) մշակվող տվյալները ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից:»:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ անձնական տվյալների մշակման, այդ թվում հրապարակման օրինականության հիմք է որևէ օրենքով նախատեսված լինելը: Հետևաբար, անձնական տվյալների հրապարակումը (տրամադրումը) օրենքով նախատեսելու դեպքում առկա կլինի առանց անձի համաձայնության անձնական տվյալն օրինական մշակելու հիմք: Միաժամանակ, Օրենքն ինքնին չի արգելում այս կամ այն անձնական տվյալի մշակումը, այդ թվում՝ հրապարակումը, ավելին՝ չի սահմանում նաև անձնական կյանքի գաղտնիքի հասկացությունը: Հետևաբար, անհրաժեշտ է անդրադառնալ այլ իրավական ակտերի, մասնավորապես՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն է, ի թիվս այլնի, նաև անձի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալը:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝

«1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝ (...) 2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը:»: Ուստի, տեղեկություն ստանալու հարցման հիման վրա պատիժը կրած անձանց անձնական տվյալների տրամադրումը պետք է մերժվի, եթե անձնական տվյալների (տեղեկության) տրամադրմամբ, ի թիվս այլնի, կխախտվի մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը:

Մարդու անձնական կյանքի իրավունքը յուրաքանչյուր անհատի արտահայտման և անհատականության պաշտպանության իրավունքն է: Մասնավոր կյանքը կազմում է մարդու անձնական կյանքի այն կողմերը, որոնց մարդը չի ցանկանում հաղորդակից դարձնել ուրիշներին: Դա, մի տեսակ, մարդու կյանքի այն մասն է, որն անձեռնմխելի է շրջապատի համար: Տվյալ դեպքում այդ գաղտնիությունն ամենևին էլ չի թաքցնում ինչ-որ հակահասարակական գործունեություն: Այն արտացոլում է ամեն մի մարդու բնական ձգտումը՝ հեռու լինել ուրիշների միջամտությունից, քանի որ մասնավոր կյանքի ոլորտի մեջ է մտնում առողջությունը, նրա սոցիալական, կրոնական հայացքները, նյութական վիճակը: Բնականաբար կյանքի այս կողմերի վերաբերյալ հրապարակումները կարող են մարդու մոտ առաջացնել անհարմարություններ, որի արդյունքում մարդը բարոյական վնաս է կրում: Ներման գործընթացում դատապարտյալի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է խախտվել այն պարագայում, երբ հասարակությունը օգտագործի նրա անձին վերաբերող տեղեկություններ, օրինակ առողջական վիճակը, ընտանեկան դրությունը, որը վերը նշված վերլուծության լույսի ներքո համարվում է անձնական կյանքի անբաժանելի մասնիկը և մարդը չի ցանկանում դրանց հաղորդակից դարձնել ուրիշներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն «անձնական կյանք» հասկացությունն ունի լայն իմաստ, որին հնարավոր չէ տալ սպառիչ սահմանում: Այն ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը³, այդ թվում՝ մարդու ֆիզիկական և սոցիալական ինքնանույնացման խնդիրների լայն շրջանակը, ինչպիսիք են օրինակ՝ մարդու կողմից իրեն այս կամ այն սեռին դասելը, անունը, ինչպես նաև սեռական կողմնորոշումը և սեռական կյանքը, որոնք ընկնում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածով պահպանվող անձնական շրջանակի ներքո⁴: Մարդու անունից բացի նրա անձնական և ընտանեկան կյանքը կարող է պարունակել ինքնանույնացման և ընտանիքի հետ կապերի պահպանման այլ միջոցներ⁵: Անձնական կյանքի կարևոր տարր կարող է հանդիսանալ մարդու առողջական վիճակի մասին տեղեկատվությունը: Ավելին, անձնական կյանքի հասկացությունը նաև նախատեսում է այնպիսի տարրեր, որոնք վերաբերում են մարդու իր պատկերի նկատմամբ իրավունքին⁶:

Մարդու անձնական կյանքին վերաբերող տեղեկատվության զուտ պահպանումը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով պետության կողմից մարդու իրավունքներին միջամտություն է հանդիսանում⁷: Այդ առումով կարևոր չէ, թե ինչ ձևով է հետազայում օգտագործվում պահպանվող տեղեկատվությունը⁸: Այդուհանդերձ, պատասխանելով

³ *Pretty* ընդդեմ Միացյալ Թագավորության, գանգատ թիվ [2346/02](#), § 61

⁴ *Bensaid* ընդդեմ Միացյալ Թագավորության, գանգատ թիվ [44599/98](#), § 47

⁵ *Burghartz* ընդդեմ Շվեյցարիայի գործով, § 24, հհ «A», գանգատ թիվ 280-B

⁶ *Sciacca* ընդդեմ Իտալիայի գործով, գանգատ թիվ [50774/99](#), § 29:

⁷ *Leander* ընդդեմ Շվեդիայի գործով, § 48, հհ «A», գանգատ թիվ 116

⁸ *Amann* ընդդեմ Շվեյցարիայի գործով, գանգատ թիվ [27798/95](#), § 69

այն հարցին, թե արդյոք պետության կողմից պահպանվող անձնական տվյալները դիպչում են մարդու անձնական կյանքի որևէ կողմերին Եվրոպական դատարանն ուշադրության կենտրոնում կպահի նման տեղեկատվության պահպանման և հաշվառման հատուկ ենթատեքստը, նրա բնույթը, օգտագործման և մշակման մեթոդները և ստացվող արդյունքները⁹:

ՄԻԵԴ-ը նշում է չնայած այն հանգամանքին, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածն ուղղակիորեն չի սահմանում «անվան/ազգանվան» հետ կապված հարաբերությունները, սակայն այնքանով, որքանով այն անձի ինքնությունը հաստատող միջոց է հանդիսանում, ընդգրկվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո¹⁰:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ ԵՄ անդամ պետությունների համար 2018 թվականի մայիսի 25-ից ուժի մեջ է մտել անձնական տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգը (չնայած այն որպես կանոն ԵՄ ոչ անդամ պետությունների վրա չի տարածվում կամ տարածվում է որոշ վերապահումներով), որով ևս կարևորվում է ԵՄ անդամ պետություններում անձնական տվյալների պաշտպանությունը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում նշվում է, որ կարծիքի ազատությունից օգտվելը սահմանափակվում է առանձնահատուկ պարտականություններով և պատասխանատվությամբ: Դրանք վերաբերում են այլոց իրավունքներին, նրանց հեղինակությանը, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության առողջության ու բարոյականության պահպանմանը: Հենց այդ չափանիշներն են պայմանավորում համապատասխան ազատության օբյեկտիվ իրավական սահմանները:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Rec (2003) 13 հանձնարարականում ևս ամրագրվել է, որ արտահայտվելու ազատության իրավունքը ներառում է տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և տարածելու իրավունքը, սակայն այդ ազատության իրականացումը ներառում է պարտականություն և պատասխանատվություն, մասնավորապես՝ կապված այլ անձանց իրավունքների կամ բարի համբավի հետ: Ուստի, ԵԽ Նախարարների կոմիտեն գտնում է, որ ցանկալի է ապահովել անհատին՝ պաշտպանության համապատասխան միջոցներով:

Մեջբերված իրավանորմերից ուղղակիորեն բխում է, որ անձնական տվյալների պաշտպանությունը համարվում է պետության պոզիտիվ պարտականությունը, որն իր ամրագրումն է ստացել ինչպես միջազգային փաստաթղթերում, այնպես էլ ներպետական մակարդակով: Անձի մասնավոր և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, որը չպետք է ենթարկվի որևէ սահմանափակման: Այն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք օրենքով սահմանված կարգով հավաքում, մշակում կամ օգտագործում են անձի վերաբերյալ տեղեկությունները պարտավոր են ձեռնամուխ լինել տվյալ

⁹ Friedl ընդդեմ Ավստրիայի, 28/1994/475/556, § 49-51:

¹⁰ Burghartz ընդդեմ Շվեյցարիայի 22 փետրվարի 1994 թվական, § 22-24

տեղեկությունների պահպանմանը: Հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց նաև անհրաժեշտություն է առաջանում հավաքագրել, պահպանել և օգտագործել անձի վերաբերյալ որոշակի տվյալներ, սակայն դա չպետք է այնպես իրականացվի, որ խաթարվեն անձի մասնավոր և ընտանեկան կյանքի պահպանմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Այսպես՝ անձնական տվյալները գտնվում են պետության պաշտպանության ներքո, հետևաբար յուրաքանչյուր ոք իրավունքի ունի, որ իր անձնական տվյալներն այլոց տնօրինման և տիրապետման ներքո չհայտնվեն: Այս իմպերատիվ պահանջներից բացառությունները կարող են սահմանվել միայն Օրենքով:

Խնդրո առարկա տեղեկությունների մատչելիության սահմանափակումը պայմանավորված է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությամբ, ինչպես նաև նրա անձնական տվյալների պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այս համատեքստում պետք է նշել, որ անձնական տվյալի՝ հանրամատչելի չլինելը դեռևս չի նշանակում, որ անձնական տվյալը գաղտնի է կամ անձնական կյանքին միջամտող: Այլ կերպ ասած՝ հանրամատչելիության ռեժիմը նշանակում է, որ անձնական տվյալը հասանելի է անորոշ կամ որոշակի թվով անձանց, միաժամանակ, եթե անձնական տվյալը հանրամատչելի չէ, պարտադիր չի, որ լինի գաղտնիք:

Միաժամանակ, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերով սահմանվել են մարդու անձնական կյանքի տվյալները (անձի անձնական կյանքի, ընտանեկան կյանքի, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, մտավոր, սոցիալական վիճակի վերաբերյալ կամ նման այլ տեղեկություններ), կենսաչափական անձնական տվյալները (անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկություններ) և հատուկ կատեգորիայի անձնական տվյալները (անձի ռասայական, ազգային պատկանելությանը կամ էթնիկ ծագմանը, քաղաքական հայացքներին, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներին, արհեստակցական միությանն անդամակցությանը, առողջական վիճակին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկություններ), որոնք համարվում են զգայուն:

Վերոգրյալից հետևում է, որ անձնական գործը, Հանձնաժողովի եզրակացությունը, ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկությունը ենթակա չէ հրապարակման և փոխանցման (տրամադրման) երրորդ անձանց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք պարունակում են դատապարտյալի անձնական և ընտանեկան կյանքին վերաբերելի դրույթներ, որոնք դիտարկվում են որպես զգայուն և դրանց՝ երրորդ անձանց հասանելի դառնալը, հնարավոր է խեղաթյուրի անձի անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության կարևորագույն և Սահմանադրությամբ երաշխավորված հիմնարար իրավունքը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ներման գործընթացի սկզբնական և միջանկյալ փուլերում հրապարակայնությունը կարող է ազդել վերջնական որոշման

կայացման անաչառության վրա, Ներման խնդրագրի քննարկման հանրային լայն պահանջը վտանգ է պարունակում: Իհարկե, որևէ հարցի հանրային ազատ քննարկումը ժողովրդավարական կարևոր ձեռքբերում է: Դրանով հանդերձ՝ ցանկացած այդպիսի քննարկում պետք է ընթանա այլոց իրավունքների և ազատությունների հարգման ու համերաշխության մթնոլորտում: Պետք է նկատի ունենալ, որ կոնկրետ իրավիճակում ներման խնդրագրի քննարկման հարցով տեղի է ունենում իրավական ընթացակարգ: Անթույլատրելի է, երբ քննարկումը զուգորդվում է հարցի, այդ թվում՝ հանցանքի համար պատիժ կրող անձի, հարցի վերաբերյալ կարծիք հայտնող այլ անձանց նկատմամբ վիրավորանքով և նրանց մասնավոր ու ընտանեկան կյանքին շարունակական միջամտությամբ: Ընդ որում, մտահոգիչ է նաև տուժողի իրավահաջորդների նկատմամբ վիրավորանքի, նրանց մասնավոր և ընտանեկան կյանքին միջամտության ու կրկնակի զոհացման (վիկտիմիզացիայի) դեպքերը:

Այդ իսկ պատճառով ներման գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հրապարակվի վերջին փուլում: Այս պարագայում մի կողմից որևէ ճնշում չի կարող գործադրվել ներման գործընթացի ներգրավված անձանց նկատմամբ, քանի որ պահպանվում է գաղտնիությունը, մյուս կողմից էլ այդ անձիք կգործեն ավելի հաշվետու կերպով, քանի որ կգիտակցեն, որ իրենց որոշման մասին ի վերջո հասարակությունը տեղեկանալու է:

Այս համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին՝ արդյո՞ք Հրամանագրից արված քաղվածքների հրապարակմամբ չի բացահայտվում (չի վնասվում) դատապարտյալի անձնական կյանքի անձեռնմխելիությունը և արդյոք անհրաժեշտ է ձեռնպահ մնալ տվյալների մշակում (հրապարակում) նախատեսելուց:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքն ինքնին չի արգելում այս կամ այն անձնական տվյալի մշակումը, այդ թվում՝ հրապարակումը, ավելին, չի սահմանում նաև անձնական կյանքի գաղտնիքի հասկացությունը: Հետևաբար, անհրաժեշտ է անդրադառնալ այլ իրավական ակտերին կամ գիտագործնական մեկնաբանություններին՝ Հրամանագրերում պարունակող անձնական տվյալները (դատապարտյալի անունը, ազգանունը և դատապարտյալի կարգավիճակ ունենալու հանգամանքը) որպես գաղտնիք գնահատելու համար:

Պետք է հաշվի առնել, որ առերևույթ գաղտնիք թվացող ոչ բոլոր տեղեկություններն են, որ իրականում իմաստ ունի դիտարկել գաղտնիք լինելու կամ սահմանափակման ենթակա լինելու տեսանկյունից: Այսպես, ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/4141/05/11 վարչական գործով¹¹ դիրքորոշում է հայտնել, որ այն տեղեկությունը, որը երրորդ անձինք օրինական հիմքերով ազատորեն ստանալու հնարավորություն ունեն, այլևս չի կարող համարվել որևէ գաղտնիք (մեջբերում՝ «(...) առարկայազուրկ են (...) այն պնդումները, որ /տեղեկությունը/ (...) հանդիսանում է (...) գաղտնիք, քանի որ սույն տեղեկատվությունը երրորդ անձինք օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն ունեն (...)»): Ընդ որում, այս չափանիշը

¹¹ Տես՝ http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809524518

վերաբերում է նաև անձնական տվյալներին և համադրելի է հանրամատչելի անձնական տվյալների հետ, քանի որ ըստ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 8-րդ հոդվածի՝ հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերված անձնական տվյալների մշակումն օրինական է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածը սահմանում է քրեական գործերով դատական քննության հրապարակայնությունը՝ նշելով, որ «1. Դատարանում գործը քննվում է դռնբաց դատական նիստում: (...) 7. Գործը կամ դրա մասը դռնփակ նիստում քննելու դեպքում հրապարակվում է դատական ակտի եզրափակիչ մասը, բացառությամբ այն դեպքերի, երբ այն պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք»: Իր հերթին՝ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածը նախատեսում է, որ «1. Դատական նիստերը դռնբաց են: (...) 7. Դատական վարույթը կամ դրա մասը դռնփակ անցկացվելու դեպքում դատական իշխանության կայքում հրապարակվում է եզրափակիչ դատական ակտի եզրափակիչ մասը, եթե այն չի պարունակում օրենքով պահպանվող գաղտնիք: (...)»:

Վերոնշյալից բխում է, որ Հրամանագրից արված քաղվածքներում պարունակվող անձնական տվյալներին համադրելի և ավելի մեծ ծավալով անձնական տվյալներ, այդ թվում՝ դատապարտվածի անունը, ազգանունը և դատապարտված լինելու հանգամանքը արդեն իսկ հասանելի են օրինական հիմքերով դրան ազատորեն ստանալու համար, այդ թվում՝ համացանցում առկա հանրամատչելի աղբյուրից:¹² Ուստի, Հրամանագրից արված քաղվածքներում առկա անձնական տվյալների հրապարակայնությունն նախատեսելու դեպքում, ըստ էության, չի բացահայտվում դատապարտյալի մասին այնպիսի նոր տեղեկություն, որը հասանելի չի (չի եղել) հանրամատչելի օրինական աղբյուրում կամ առնվազն դատապարտյալի անձնական կյանքի մասին նոր տեղեկություններ բացահայտելու ռիսկը նվազագույն է¹³:

Ինչ վերաբերում է ներման խնդրագրի բավարարման կամ մերժման փաստին (ներվելու կամ չներվելու հանգամանքին), ապա պետք է հաշվի առնել, որ դատապարտյալի՝ պատիժը կրելու, պատժի կրումից մասնակի կամ լրիվ ազատվելու հարաբերությունները որոշակիորեն դուրս են մարդու նեղ անձնական և ընտանեկան կյանքի տիրույթից (հանրության համար վտանգավոր արարք (հանցագործություն) կատարած անձն այդ ուժով ներքաշվում է հանրության հետ իրավահարաբերությունների մեջ)¹⁴, քանի որ գտնվում են արդարադատության

¹² Տես՝ www.datalex.am

¹³ Տվյալ պարագայում ենթադրվում է, որ ՀՀ նախագահի հրամանագիրը վերաբերում է ներման (խնդրագիրը բավարարելու, պատիժը կրելուց մասնակի կամ լրիվ ազատելու) փաստին եւ չի պարունակում դատապարտյալի ապրումների, հոգեկան, մտավոր եւ ֆիզիկական վիճակի, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքների կամ սովորույթների, ընտանեկան և նեղ անձնական հարաբերությունների, անձնական գրագրության և թղթակցության մասին եւ նման այլ տեղեկություններ:

¹⁴ Տես ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ (ՀՀ Սահմանադրության գիտագործական մեկնաբանությունների ժողովածու), 2010թ., էջ 276 ((...) մասնավոր կյանքը կազմում է մարդու անձնական կյանքի այն կողմը, որին մարդը, իր ազատության շնորհիվ, չի ցանկանում հաղորդակից դարձնել ուրիշներին: Դա մարդու կյանքի այն մասն է, որն անձեռնմխելի է շրջապատի համար: Այն

իրականացման հրապարակայնության սկզբունքի, արդարադատության իրականացման նկատմամբ հանրային հսկողության, հանցագործությունների բացահայտման և հանցագործներին պատժելու հասարակության՝ քրեաիրավական շահի շրջանակներում:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ թեև Հրամանագրից արված քաղվածքները պարունակում են անձնական տվյալներ, սակայն քանի որ դրանք դատապարտյալի անուն-ազգանունից և ներվելու կամ չներվելու փաստից բացի այլ տեղեկություններ չեն պարունակում, ապա քաղվածքների հրապարակմամբ չի խախտվում դատապարտյալի անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը:

5) Նախագծի կարգավորումների շրջանակներում հարկ ենք համարում անդրադառնալ նաև ներում, պայմանական վաղաժամկետ ազատում իրավական հնարավորությունների տարբերությանը: Չնայած այն հանգամանքին, որ ներման ինստիտուտը բացարձակ հայեցողական բնույթ է կրում, սակայն յուրաքանչյուր դեպքում դատապարտյալին ներում շնորհելու ժամանակ հաշվի պետք է առնվի «Ներման մասին» օրենքի 6-րդ հոդվածով թվարկված հանգամանքների համակցությունը: Այսպիսով՝ ներկա կարգավորումների պարագայում «Ներման մասին» օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված նորմով ներման ինստիտուտի կիրառությունը և դատապարտյալների Սահմանադրությամբ ամրագրված իրավունքի իրացումը որոշակի առումով սահմանափակվել է՝ պայմանավորելով որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների կողմից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար պատժի՝ օրենքով սահմանված մասը կամ ազատազրկման ոչ պակաս, քան կեսի կրումով: Այս առումով, ներման ինստիտուտն որոշակիորեն նմանեցվել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտին: Օրենսդրական նման ձևակերպում սահմանելը, ըստ էության, չի արդարացնում տվյալ ինստիտուտի կիրառությունը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այս դեպքում կարծես թե պետությունը դատապարտյալին պատժի կրման ընթացքում տևական ժամանակահատվածում պատժից ազատվելու որևէ հնարավորություն չի ընձեռում, իսկ հետագայում՝ պատժի՝ օրենքով նախատեսված մասը կրելուց հետո, միաժամանակ երկու միմյանցից տարբերվող ինստիտուտների կիրառման հնարավորություն է նախատեսում: Այս դեպքում վերոհիշյալ ինստիտուտները միաժամանակ սկսվում են կիրառվել անձի նկատմամբ, որն անարդյունավետ է դարձնում դրանց կիրառությունը և հանգեցնում է պետական ռեսուրսների անհարկի վատման: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունած թիվ (2003) 22 հանձնարարականի համաձայն՝ պայմանական ազատումը նշանակում է ազատազրկման դատապարտվածների վաղաժամկետ ազատում՝ ազատվելուց հետո կիրառվող անհատականացված

արտացոլում է ամեն մի մարդու բնական ձգտումը՝ ունենալու իր ինտիմ եւ գործարար հետաքրքրությունների անձնական աշխարհը, որը հեռու լինի ուրիշների միջամտությունից)

պայմաններով: Պայմանական վաղաժամկետ ազատումը չի ներառում համաներումը կամ ներումը:

Այսպիսով՝ Նախագծով առաջարկվում է պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի հիմքում ընկած չափորոշիչներից տարբերվող ընթացակարգ:

Անդրադառնալով Նախագծով առաջարկվող հաջորդ կարգավորմանը պետք է նշել, որ մարդասիրական (հումանիզմի) սկզբունքին համահունչ ցմահ ազատազրկման դատապարտվածների համար նախատեսվել է ազատազրկման ոչ պակաս, քան տասնհինգ տարին փաստացի կրելուց հետո ներման խնդրագիր ներկայացնելու դեպքում ներում շնորհելու ընթացակարգ: Բանն այն է, որ գործող օրենսդրական կարգավորումներին համապատասխան ցմահ ազատազրկման դատապարտվածներին պետությունը տևական ժամանակահատված (մասնավորապես՝ դա 20 տարին է) պատժից ազատվելու որևէ հնարավորություն չի ընձեռում, իսկ հետագայում միաժամանակ երկու միմյանցից տարբերվող ինստիտուտների կիրառման հնարավորություն է նախատեսում՝ ներման և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու: Այնուամենայնիվ, գործնականում հնարավոր է ցմահ ազատազրկման դատապարտվածն ուղղվի մինչև 20 տարին լրանալը, նման պարագայում դատապարտյալին քրեակատարողական հիմնարկում պահելը և պատժից ազատվելու որևէ հնարավորություն չընձեռելը, ըստ էության, խեղաթյուրում է պատժի նպատակները, այսինքն՝ այն փաստական արդյունքը, որին զգտում է հասնել պետությունը՝ դատապարտելով հանցագործին և նրա նկատմամբ նշանակելով այս կամ այն պատիժը: Բացի այդ, Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրող անձանց հնարավորություն է տրվում ինչպես պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար պատժի՝ օրենքով սահմանված մասը, այնպես էլ ազատազրկման ոչ պակաս, քան կեսը կրելուց հետո ներման խնդրագիր ներկայացնելու դեպքում ներում շնորհել: Ստացվում է, որ նրանց համար օրենքը առավել բարենպաստ նորմ է սահմանում, քան՝ ցմահ ազատազրկվածների, քանի որ, եթե որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար պատժի՝ օրենքով սահմանված մասը չի լրացել, սակայն նրանք կրել են նշանակված պատժի կեսը, ապա հնարավոր է նրանց ներում շնորհվի: Վերոգրյալի լույսի ներքո՝ կարծում ենք, ազատազրկման բացասական հետևանքները կրճատելու և ցմահ ազատազրկման դատապարտվածների սոցիալական վերականգնմանը խթանելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում նախատեսել նրանց համար ներում շնորհելու ավելի վաղ ընթացակարգ: Տասնհինգ տարի ժամկետ նախատեսելն էլ պայմանավորված է տվյալ անձանց վերագրվող հանցագործությունների առավել ծանր բնույթով, որպեսզի հավասարակշռվի նաև մյուս կողմի (տուժողի) իրավունքները:

6) Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով գործաձվում է «բացառիկ հանգամանքներ» հասկացությունը: Այդ հասկացությունը գնահատողական կատեգորիա է և գործնականում կարող է հանգեցնել տվյալ նորմի անհարկի չարաշահումների: Նման նորմի առկայությունն ինքնին հակասության մեջ է գտնվում Սահմանադրությամբ ամրագրված հիմնարար սկզբունքներից մեկի՝ իրավական որոշակիության սկզբունքի հետ: Իրավական որոշակիության սկզբունքը բխում է իրավական պետության գաղափարից և պահանջում է այնպիսի օրենքի առկայություն, որի փաստակազմը և իրավական հետևանքը բովանդակային տեսանկյունից այնքան որոշակի կլինեն, որ հնարավորություն կտան հիմնական իրավունքի կրողին և հասցեատիրոջը դրսևորելու համապատասխան վարքագիծ: Սակայն, Օրենքով չի բացահայտվում «բացառիկ հանգամանքներ» հասկացությունը և ըստ էության իրավունքի կրող սուբյեկտին հնարավորություն չի ընձեռում դրսևորելու համապատասխան վարքագիծ: Հետևաբար, անհրաժեշտ է սահմանել ոչ սպառիչ ցանկ, ինչը հնարավորություն կտա որոշակիորեն կանխատեսելի դարձնել այդ բացառիկ հանգամանքերը: Մասնավորապես, բացառիկ կարող են ճանաչվել դատապարտյալի կյանքին սպառնացող անմիջական վտանգը, դատապարտյալի՝ առանց խնամքի մնացած երեխայի առկայությունը, արտակարգ կամ ռազմական դրությունը, քրեակատարողական հիմնարկում առաջացած արտակարգ իրավիճակներում դատապարտյալի կողմից ցուցաբերված բացառիկ օգնությունը և այլն:

Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծում առաջարկվում են հետևյալ կարգավորումները.

1. սահմանվել է ներման խնդրագիրը չքննարկելու և այն վերադարձնելու դեպքերը,
2. սահմանվել է օբյեկտիվ իրականությամբ պայմանավորված ժամկետներ՝ մասնավորապես, ներման խնդրագրի հիման վրա պահանջվող տեղեկատվությունը 10-օրյա, իսկ անձնական գործը Ներման հանձնաժողով ներկայացնելու մեկամսյա ժամկետ,
3. ամրագրվել է տուժողների և նրանց իրավահաջորդների իրավունքների պաշտպանության մեխանիզմ,
4. նախատեսվել է ներման խնդրագրի քննարկմանն առնչվող տեղեկությունների գաղտնիությունն ապահովելու կարգավորումներ,
5. նախատեսվել է որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված և ցմահ ազատազրկման դատապարտվածների համար ներում շնորհելու ավելի վաղ ընթացակարգ,
6. կարգավորվել է ներման խնդրագրերը մերժելու դեպքում բացառիկ հանգամանքներով ներման նոր խնդրագրեր ներկայացնելու հետ կապված հարաբերությունները,

7. ներում շնորհելու գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով նախատեսվել է ներման խնդրագրերի մասին քաղվածքների հրապարակման պահանջ:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության, Ազգային ժողովի նախագահի տեղակալ Վահե Էնֆիաջյանի և Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանի կողմից:

Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է ապահովել օրենսդրական նորմերի ոչ արդյունավետ կիրառության բացառումը և օրենսդրական բացերի վերացումը, որոշակի կատեգորիայի անձանց իրավունքների ամրագրումն ու երաշխավորումը, ինչպես նաև գործնականում առկա որոշ խնդիրների կարգավորումը: